Հորբատեղում ուսուցիչների և աշակերտների փոխադրումն իրականացվում է պետական ծրագրով

13.10.17 15:25

Մամուլում օրերս տեղ գտած հրապարակումն այն մասին, որ Վայոց ձորի մարզի, շուրջ 250 բնակիչ ունեցող, Հորբատեղի համայնքում վաղուց ներմարզային երթուղի չի գործում, և որ տրանսպորտի բացակայությունը լուրջ խնդիր է հատկապես դպրոցականների համար, քանի որ Ավագ դպրոց Հորբատեղիում չկա և երեխաները կրթությունը չեն կարողանում շարունակել, այս խնդրի վերաբերյալ **Slaq.am**-ը դիմեց Վայոց ձորի մարզպետարան :

Մեզ հետ զրույցում մարզպետարանի տեղեկատվության հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար Սոնա Մարգարյանը նախ հերքեց հիշյալ տեղեկատվությունը՝ հիմնավորելով ետևյալ կերպ. «Դա խնդիր չի կարող առաջացնել, որովհետև ուսուցիչների և աշակետների տեղափոխումը պետականորեն ֆինանսավորվում է. այսինքն՝ ներմարզային տրանսպորտի բացակայությունը երեխաների կրթության վրա չի ազդում, որովհետև հատուկ տրանսպորտային միջոցով , պետական ֆինասավորմամբ, կազմակերպվում է փոխադրումը Արտաբույնքից Հորբատեղ և հակառակ ուղղությամբ: Արտաբույնքից շուրջ 11 հոգի տեղափոխվում է Հորբատեղ, 11 ուսուցիչ, 2 աշակերտ և եթե լինում է ոչ հիմնական դպրոցի տարիքի երեխա, որ պետք է կրթությունը շարունակի Արտաբույնքում, ավագ դպրոցում, փոխադրումը կազմակերպվում է:

Ուղղակի բանն այն է, որ այս պահին Հորբատեղում չկա ավագ դպրոցի տարիքային երեխա :

Ինչ վերաբերում է, տեղեկատվությանը, թե՝ երթուղայինի չաշխատելու հիմնական պատճառը գյուղի քարուքանդ ճանապարհներն են, նշեմ, որ ճանապարհի վերանորոգման խնդիրը ընդգրկված է՝ համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ճանապարհների վերանորոգման ծրագրում և առաջիկա տարիների ընթացքում այն կիրականացվի»: